# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-21/48» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

«30» հուլիսի 2021թ. ժամը՝ **12** $^{30}$

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | Մ. Գասպարյան |
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | Գ. Մակունց |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Ա. Թադևոսյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | Դ. Նիկողոսյան |
| Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | Ժ. Դադիյան |

Նիստից բացակայում էր Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) Վ. Բաբայան-ը:

## 1. Տեղեկություն « ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-21/48» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

«ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-21/48» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Գնման ընթացակարգ), հայտերը բացվել են 2021 թվականի հուլիսի 30-ին, ժամը 12:30-ին էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am համակարգի միջոցով:

## 2. Գնման առարկայի նախահաշվային գնի վերաբերյալ

**Ընդունել ի գիտություն:**

Գնման ընթացակարգի շրջանակներում գնման առարկաների՝ գնման հայտով սահմանված գինը կազմում է 3 360 000 ՀՀ դրամ:

## 3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

| | Մասնակցի անվանումը | Մասնակցի էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1. | Տիգրան Սուքիասյան Յուրիի ԱՁ | Pmp.sukiasyan@gmail.com | 20229621 |
| 2. | Աշտարակի տարածաշրջանի կանանց ասոցացիա ՀԿ | arwango@gmail.com | 05012116 |

## 4. Հայտերի էլեկտրոնային ձևով կազմելու և ներկայացնելու՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

Գնման ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

Գնման ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից հայտերով ներկայացվել են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը: Մասնակիցների հայտերով ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

**Ընդունել ի գիտություն:**

| Հ/Հ | Մասնակցի | Մասնակցի գնային առաջարկը /ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|
| | | Խորհրդատվական ծառայություններ | | |
| | Անունը | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1. | Տիգրան Սուքիասյան Յուրիի ԱՁ | 2000000 | - | 2000000 |
| 2. | Աշտարակի տարածաշրջանի կանանց ասոցացիա ՀԿ | 3500000 | - | 3500000 |

## 7. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## 8. Հանձնաժողովը որոշեց՝

8.1. Հիմք ընդունել կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 45-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները, հանձնաժողովի նիստը կասեցնել, և գնման ընթացակարգի բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների սույն թվականի օգոստոսի 6-ը, ժամը 11:00-ին,

8.2. Հանձնաժողովի քարտուղարին.

«Տիգրան Սուքիասյան Յուրիի ԱՁ-ին և Աշտարակի տարածաշրջանի կանանց ասոցացիա ՀԿ-ին ծանուցել սույն արձանագրության 8.1 կետով նախատեսված բանակցությունների անցմացման օրվա ժամի և տեղի մասին:

---

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Գնման ընթացակարգի շրջանակներում գնահատման հանձնաժողովի հայտերի գնահատման նիստ հրավիրել շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վարչական շենքում, ք. Երևան, Արմենակյան 129, 2-րդ հարկ, № 5 սենյակում՝ սույն թվականի օգոստոսի 6-ին, ժամը 11:00–ին:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին**

| | | |
|---|---|---|
| Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) | ____________ | Մ. Գասպարյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) | ____________ | Գ. Մակունց |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ____________ | Ա. Թադևոսյան |
| Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) | ____________ | Դ. Նիկողոսյան |
| Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) | ____________ | Ժ. Դադիյան |